# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 66-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2024 թվականի հոկտեմբերի 11-ի նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի հաշվետվության կատարման մասին:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 81-Ա որոշման N4 հավելվածը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

3. «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող գործունեության՝ «ԶՊՄԿ» բացահանքի տարածքում պայթուցիկ նյութերի պահեստի կառուցման նախաձեռնությանը նախնական համաձայնություն տալու վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցի 41/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը օտարելու մասին:

5. Հայաստան Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցի 41/2 հասցեում գտնվող 3,45108 հա հողամասը «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու համաձայնություն տալու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու համաձայնություն տալու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը հրապարակային սակարկություններով /աճուրդով/ վաճառելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Գեղի բնակավայրի համակցված փաստաթղթերում փոփոխություն կատարելու, հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և հրապարակային սակարկություններով /աճուրդային կարգով/ օտարելու մասին:

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Ձագիկավան բնակավայրում գտնվող ակումբի շենքը «Ներառում Հայաստան» կրթական և սոցիալ-իրավական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 67-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 68-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 81-Ա ՈՐՈՇՄԱՆ N4 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 9-ի N 301-Ն որոշման փոփոխություններով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 81-Ա որոշման N4 հավելվածը՝ նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 69-Ա**

## «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԱՑԱՀԱՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետը , ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. 1325-Ն(որոշումը խմբ. 28.12.23 N 2343- Ն) որոշմամբ սահմանված կարգը, հաշվի առնելով 2024 թվականի հոկտեմբերի 2-ին, ժամը 14:00-ին Քաջարանի մշակույթի պալատում (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 2) կայացած հանրային քննարկման արդյունքները, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ նախնական համաձայնություն «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող գործունեության՝ «ԶՊՄԿ» բացահանքի տարածքում պայթուցիկ նյութերի պահեստի կառուցման նախաձեռնությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 70-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ 41/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի12-ի թիվ 286-Ն որոշման, ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի և հաշվի առնելով Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցի 41/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նշանակության «արդյունաբերական օբյեկտների» գործառնական նշանակության 6,09033 հողամասը՝ ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին 74363000 (յոթանասունչորս միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -8 | Դեմ -1 | Ձեռնպահ -4 |
|---|---|---|
| ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ | ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ | ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ |
| ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ | | ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ |
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ ՔԱՋԻԿԻ | | ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ | | ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ | | |
| ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ | | |
| ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 71-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ 41/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 3,45108 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի $48^1$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի թ) ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2012 թվականի նոյեմբերի 27-ին տրված ՇԱԹՎ-29/232 (նախկին 14/179) օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, թիվ ԼՎ-232 լեռնահատկացման ակտը և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի երկարաձգման մասին թիվ 134-Ա հրամանը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցի 41/2 հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության «ընդերքօգտագործման» գործառնական նշանակությամբ 3,45108 հա հողամասը ընդերքօգտագործման նպատակով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով մինչև 2041 թվականի մայիսի 30-ը տրամադրել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը,

սահմանելով 2106890 /երկու միլիոն մեկ հարյուր վեց հազար ութ հարյուր իննսուն/ ՀՀ դրամ տարեկան վճար:

2. Վարձավճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր հաշվետու տարվա պայմանագրի կնքման օրվանից սկսած մինչև տասնհինգերորդ օրը: Սահմանված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար սահմանել տույժ՝ տարեկան վճարի գումարի 0.05 տոկոսի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

| Կողմ -8 | Դեմ -1 | Ձեռնպահ -4 |
|---|---|---|
| ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ | ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ | ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ |
| ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ | | ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ |
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ ՔԱՋԻԿԻ | | ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ | | ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ | | |
| ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ | | |
| ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 73-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 29-րդ կետերով, 80-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 50-րդ հոդվածի 3-րդ կետի 1ին ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումը և հաշվի առնելով Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Համաձայնություն տալ Քաջարան համայնքի վարչական տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու՝

ա/ Քաջարան համայնք, Բաբիկավան բնակավայրում գտնվող բնակավայրերի նշանակության 0,18027 հա այլ հողերից / կադաստրային ծածկագիր 09-038-0015-0017/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 840000 / ութ հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ վարձավճար:

բ/ Քաջարան համայնք, Բաբիկավան բնակավայրում գտնվող բնակավայրերի նշանակության 0,15829 հա այլ հողերից / կադաստրային ծածկագիր 09-038-0014-0003/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 740000 / յոթհարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ վարձավճար:

գ/ Քաջարան համայնք, Քաջարանց բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,60017 հա արոտներից / կադաստրային ծածկագիր 09-109-2500-0002/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 460000 /չորս հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

դ/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,52521 հա հողամասերից /որից 0,43785 հա արոտներ /09-007-0063-0039, 09-007-0002-0044, 09-0074-0002-0045, 09-007-0002-0048, 09-007-0002-0049, 09-007-0002-0058, 09-007-0002-0055, 09-007-0002-0054/, 0,01802 հա վարելահողեր /09-007-0002-0059, 09-007-0002-0051/, 0,06934 հա այլ հողեր /09-007-0203-0003, 09-007-0002-0046, 09-007-0002-0047, 09-007-0002-0057, 09-007-0002-0056, 09-007-0002-0052, 09-007-0002-0053/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 435000 /չորս հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

ե/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,09726 հա հողամասերից /որից 0,02290 հա արոտներ/կադաստրային ծածկագիր 09-007-0002-0043/, 0,07436 հա այլ հողեր/ կադաստրային ծածկագիր 09-007-0002-0042// 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 73000 / յոթանասուներեք հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

զ/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող 0,23958 հա հողամասերից /որից 0,14402 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասեր /09-007-0008-0128, 09-007-0008-0123, 09-007-0008-0129/, 0,06392 հա բնակավայրերի նշանակության այլ հողեր /09-007-0008-0124, 09-007-0008-0122, 09-007-0008-0130, 0,03164 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողեր /09-007-0008-0127// 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 9239000 /ինը միլիոն երկու հարյուր երեսունինը հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

է/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող 0,10986 հա հողամասերից /որից 0,00178 հա բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասեր /09-007-0206-0002/, 0,06093 հա բնակավայրերի նշանակության այլ հողեր /09-007-0010-0066/, 0,04367 հա գյուղատնտեսական նշանակության արոտների /09-007-0063-0037/, 0,00348 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողեր /09-007-0204-0003, 09-007-0204-0002// 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 3864000 /երեք միլիոն ութ հարյուր վաթսուն չորս հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

ը/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,10297 հա այլ հողամասերից /09-007-0007-0054/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի

պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 78000 /յոթանասունութ հազարո/ ՀՀ դրամ վարձավճար:

թ/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող 0,26878 հա բնակավայրերի նշանակության հողամասերից /որից 0,1918 հա բնակելի կառուցապատման հողամասեր /09-007-0008-0117/, 0,07698հա այլ հողեր /09-007-0008-0118, 09-007-0008-0119// 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 16410000 /տասնվեց միլիոն չորս հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

ժ/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 5,06607 հա այլ հողամասերից / 09-007-0348-0012/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 3800000 /երեք միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

ի/ Քաջարան համայնք, Քաջարան քաղաքում գտնվող 1,48628 հա հողամասերից /որից 0,08398 հա բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասեր /09-007-0284-0002/, 1,4023 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողեր /09-007-0052-0016/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 6179000 /վեց միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

2.Վարձավճարը ենթակա է վճարման մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող ամսվա տասնհինգերորդ օրը: Սահմանված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար սահմանել տույժ՝ ամսական վճարի գումարի 0.05 տոկոսի չափով:

3.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումն:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 74-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՋԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 29-րդ կետերով, 80-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 50-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումը և հաշվի առնելով Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Համաձայնություն տալ Քաջարան համայնքի վարչական տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու՝

ա/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,09973 հա /որից 0,00383 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողեր /09-007-0206-0004/, 0,09079 հա բնակավայրերի նշանակության այլ հողեր /09-007-0010-0069/, 0,00511 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր /09-007-0063-0040/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 5790000 /հինգ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

բ/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,01145 հա գյուղատնտեսական նշանակության արոտներից /09-007-0063-0036/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 8600 /ութ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

գ/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,01145 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողերից /09-007-0058-0014/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 8600 /ութ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

դ/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,01135 հա հողերից /որից 0,00249 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողեր /09-007-0058-0012, 09-007-0035-0037/, 0,00436 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողեր /09-007-0058-0011/, 0,0045 հա բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողեր /09-007-0291-0003/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 286000 /երկու հարյուր ութսուն վեց հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

ե/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,01145 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողերից /09-007-0035-0038/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 8600 /ութ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

զ/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,01145 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերից /09-007-0008-0100/ 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 700000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

է/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,01145 հա բնակավայրերի նշանակության հողերից /որից 0,01062 բնակելի կառուցապատման հողեր /09-007-0008-0101/, 0,00083 հա այլ հողեր/09-007-0008-0102// 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 700000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

ը/ Քաջարան համայնք, Քաջարան բնակավայրում գտնվող 0,01145 հա բնակավայրերի նշանակության հողերից /որից 0,00487 բնակելի կառուցապատման հողեր /09-007-0008-0099/, 0,00087 հա ընդհանուր օգտագործման հողեր 09-007-0242-0003/, 0,00571 հա այլ հողեր /09-007-0008-0098/ / 1 /մեկ/ տարի ժամկետով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով էլեկտրահաղորդման գծերի անցկացման, շահագործման և վերանորոգման նպատակով, սահմանելով տարեկան 700000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

2.Վարձավճարը ենթակա է վճարման մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող ամսվա տասնիհինգերորդ օրը: Սահմանված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար սահմանել տույժ՝ ամսական վճարի գումարի 0.05 տոկոսի չափով:

3.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումն:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 75-Ա**

**ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ /ԱՃՈՒՐԴՈՎ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, 80-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն, 2020 թվականի հունիսի 04-ի թիվ 1023-Ն որոշումների և հաշվի առնելով Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է.**

1.Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քաջարան համայնքի վարչական տարածքում գտնվող հետևյալ հողամասերը հրապարակային սակարկություններով /աճուրդով/ օտարել՝

ա/ ԼՕՏ 1. ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի գյուղ Կավճուտ, 3-րդ թաղամաս 13/3 հասցեում գտնվող 0,03104 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 86100 /ութսունվեց հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ:

բ/ ԼՕՏ 2. ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի գյուղ Քաջարանց, 2-րդ փողոց 74/2 հասցեում գտնվող 0,03343 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 142400 /մեկ հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:

գ/ ԼՕՏ 3. ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի գյուղ Քաջարանց, 2-րդ փողոց 16 հասցեում գտնվող 0,04866 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման

հողամասը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 208 000 /երկու հարյուր ութ հազար/ ՀՀ դրամ:

դ/ ԼՕՏ 4. ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի քաղաք Քաջարան, Խ. Աբովյան փողոց 1/1 հասցեում գտնվող 0,00267 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը՝ խանութ-սրահ կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 98000 /իննսունութ հազար/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշման 1-ին կետով սահմանված հողամասերի օտարման պայմանագրում ամրագրել Քաջարան համայնքի՝ նշված հողամասերի առաջնային հետգնման իրավունքը և ծրագրի իրականացման ժամկետ սահմանել 2 /երկու/ տարի:

3.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 76-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ /ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ/ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 29-րդ կետերով, 80-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 15-րդ մասով, 63-րդ և 67-րդ հոդվածներով, Քաջարան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 02-ի N 14-Ա որոշմամբ, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումների և հաշվի առնելով Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Գեղի բնակավայրի համակցված փաստաթղթերում՝ համաձայն հավելվածի կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.0692 հա (կադաստրային ծածկագիր 09-026-0016-0001) այլ հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, «գյուղատնտեսական արտադրական օբյեկտների» գործառնական նշանակությամբ:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա փոխադրված 0,0692 հա հողամասը պետական գրանցում կատարելուց հետո աճուրդային կարգով օտարել արհեստական լճակներ

կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 192000 (մեկ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ:

3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 77-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱԳԻԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԿՈՒՄԲԻ ՇԵՆՔԸ <<ՆԵՐԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով <<Ներառում Հայաստան>> կրթական և սոցիալ-իրավական հասարակական կազմակերպության նախագահ Ս. Պետրոսյանի գրությունը և Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ  է.**

1. ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Ձագիկավան գյուղի 1-ին թաղամաս 40 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող ակումբի շենքը 1 /մեկ տարի/ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ներառում Հայաստան» կրթական և սոցիալ-իրավական հասարակական կազմակերպությանը՝ իր կանոնադրությամբ նախատեսված գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Սահմանել, որ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ պայմանագրի կնքման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են օգտառու՝ «Ներառում Հայաստան» կրթական և սոցիալ-իրավական հասարակական կազմակերպության միջոցների հաշվին:

3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 78-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու կանոնակարգի 6-րդ բաժնի 6.1-րդ և 6.2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ը ժամը 15:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 72-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաջարան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-Ա որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սյունիք - 5 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Կավճուտ բնակավայրի համակցված փաստաթղթերում՝ համաձայն հավելվածի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողամասերը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ «խառը կառուցապատման» գործառնական նշանակությամբ՝

ա/ (09-038-0402-0001 կադաստրային ծածկագրից) 0,35 հեկտար գյուղատնտեսական նշանակության այլ հողերից (հատված ԳԱ-2):

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումն:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԹԱՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Ք.Քաջարան
2024թ. հոկտեմբերի 11